



**ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԿՈՆԴԱԿԸ  
ՀՆԴԿԱՀԱՅ ՆՎԻՐԱՏՈՒՆԵՐԻՆ**

**ԳԵՌՐԳ ԵԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ, ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲ  
ՏԵԱՌՆ ԵՒ ԿԱՄՕԻՆ ԱԶԳԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ  
ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ, ԵԱՅՐԱԳՈՅՆ  
ՊԱՏՐԻԱՐԻ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵՏԱՐ ԱՐՈՌՈՑ  
ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՑ ՍՐՐՈՑ  
ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷԶՄԻԱՆԵՒ**

ՀՆԴԿԱՀԱՅ ՍԻՐԵԼԻ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ՄԵՐՈՒՄ, ՀԱՐԱԶԱՏԻ ՄԱՅՐ ԱՐՈՌՈՑ  
ՍՐՐՈՑ ԷԶՄԻԱՆԵՒ ԵՒ ԲԱՐԵՊԱՇՏ ՆՈՒՐԱՏՈՒ ԶԱՒԱԿԱՅ ՄԵՐՈՑ, Ի ԳԱՀԷՆ  
ԱՌԱՔԵԼԱՇԱԽԻՂ ՍՐՐՈՑ ՀՕՐԸ ՄԵՐՈՑ ԳՐԻԳՈՐԻ ԼՈՒՍԱՒՈՐԶԻ ԵՒ Ի ԳԱՀԱԿԱԼԷ  
ՆՈՐԻՆ ՈՂՋՈՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ:

Երկու տարի առաջ, հեռադարյան Հայ Եկեղեցու ավանդության հետևելով,  
ձեզ այցելության ուղարկեցինք, որպես հայրապետական պատվիրակ, Սուրբ  
Էջմիածնի լավագույն միաբաններից մեկին՝ Գերագույն Հոգևոր Խորհրդի Ես-  
խագահող անդամ՝ գերաշնորհ տեր Վանան արքեպիսկոպոս Կոստանյանին,  
որ ուսումնասիրե ձեր հոգևոր-կրթական կյանքը, հասկանա ձեր կարիքներն  
ու վշտերը և մխիթարե ու մխիթարվի ձեզնով և Մեզ զեկուցանե ի տնօրինու-  
թյուն:

Հանությանը լսեցինք ձեր եկեղեցական-կրոնական կյանքի և պահանջ-  
ների, ձեր ազգային-կրոնական կրթության ու դաստիարակության, ինչպես  
ևս ձեր ընտանեկան և տնտեսական վիճակի մասին:

Մեր պատվիրակը զեկուցեց նաև, որ դուք տեղում իր կատարած բոլոր  
ձեռնարկներին աջակից ու գործակից եք եղել և նպաստել նոցա կենսագործ-  
ման. օրհնում եմք ձեզ և հորդորում այդպես լինել նաև ապագայում:

Մեր պատվիրակի զեկուցումներն ու ձեր ներկա գործերը առիթ են ըն-  
ծայում Մեզ վերհիշելու հնդկահայերի՝ ձեր նախնայաց մեծագործությանց ու  
փառավոր անցյալի մասին:

Հնդկահայությունը՝ 17-րդ դարու վերջին քառորդից մինչև 19-րդ դարու  
առաջին քառորդը, վաճառականական ասպարեզում մեծ հաջողություն ունե-  
ցավ և հարստացավ ու՝ թե՛ երկրում և թե՛ երկրից դուրս՝ հայ ժողովրդի  
կյանքում մեծ դեր կատարեց և իր համար հայ պատմության մեջ որոշ դիրք  
ստեղծեց:

Հնդկաստանում հայության մեջ սկիզբ առավ կոլտնտեսական-կրթական  
շարժում՝ զգալիորեն անեց հայ դպրոցների թիվը, բացվեց հայ նեմարան,

գարգացավ մամուլը, զորացավ գրական գործունեությունը և այսպես սկիզբ առավ հեղինակայության մեջ կուլտուրական-կրթական շարժում և զարգացավ: Հեղինակայությունը արտաքին հայության նկատմամբ երկու ուղղությամբ աշխատանք տարավ. մեկ՝ ֆրիստոնեական կրոնի բարոյական վսեմ գաղափարները հայ կյանքում կենսագործելու ուղղությամբ, որի ապացույց կարող են հանդիսանալ իբրև նմուշ՝ Ղրիմի ֆաղաֆներում և Նոր-Նախիջևանում հիշյալ նպատակներով համայնքների անվամբ թողած խոշոր կտակները՝ ծերանոցներ, հիվանդանոցներ, անկելանոցներ, որբանոցներ և նման աստվածահան հաստատություններ հիմնելու նպատակով՝ արմատացնելու համար ֆրիստոնեական կրոնի և սիրո ու եղբայրության գաղափարները հայ ժողովրդի կյանքում: Այսպիսի կտակներից է Մասեհ Բաբաջանի կտակը Նոր-Նախիջևանի համայնքին թողած:

Երկրորդ ուղին ֆաղաֆական բնույթ ունի. հեղինակայ ժողովուրդը ցանկացել է արտաքին հայության, հատկապես կովկասահայության ֆաղաֆացիական կյանքը ապահովել և հետզհետե ֆաղաֆական ինֆեուրույն կյանք ստեղծել ռուսաց պետության աջակցությամբ և նորա հովանավորությամբ: Սորա ապացույց են գոյություն ունեցող գրավոր փաստաթղթերը և՛ ռուսաց կայսրներին սիրաշանելու նպատակով՝ նոցա նվիրաբերած թանկարժեք նվերները:

Տասնիններորդ դարից սկսած փոխվեցան Հեղինակայության կյանքի պայմանները և հեղինակայությունը վաճառականական մրցման մեջ տեղի տվավ եվրոպացի վաճառականներին, սակայն քարեքայտաբար, պահպանեց և ցայսօր պահպանել է իր էկեղեցասիրությունը և ազգային-կրոնական ոգին, որ այնքան կարևոր է բարձր կուլտուրա ունեցող ժողովուրդների մեջ ապրողին՝ ձուլման վտանգից զերծ մնալու համար: Հեղինակայությունն այսօր էլ գաղափարով և գործով նույն էկեղեցասերն է և նույն ազգասերն ու հայրենասերը, ինչպես և առաջ: Մտեք Սուրբ Էջմիածնի էկեղեցական թանգարանը և դուք կտեսնեք այնտեղ թանկարժեք շուրջառներ, թագեր, թանկարժեք վարագույրներ, դպիրների և երգչական խմբերի համար մեծաքանակ ժամաշապիկներ, արժեքավոր արծաթ-նսկեգոծ եպիսկոպոսական գավազաններ, արծաթյա մեծ և փոքր աշտանակներ և սկիհներ, բոլորն էլ հեղինակայության նվերներ, որոնք արժեքավոր են ինչպես իրենց որակով, նույնպես նաև հնությունը:

Հեղինակայությունն այսօր էլ արտահայտում է նույն էկեղեցասիրությունը. նա ուղարկել է Սուրբ Էջմիածին բազմաթիվ և բազմատեսակ նվերներ՝ Սուրբ Պատարագի հայրապետական լիակատար զգեստ, Սուրբ Պատարագի մի ֆանի ձեռք եպիսկոպոսական լիակատար զգեստներ, հայրապետական և եպիսկոպոսական արծաթ-նսկեգոծ գավազաններ և այլն, որպեսզի հայության կենտրոնական մեծագույն սրբավայրը պահպանե իրեն հատուկ վայելույթ տեսքը, հմայքն ու խորհրդավորությունը:

Հեղինակայությունը աշխարհի այս շափագանց լարված վիճակի մեջ անգամ չի մոռացել Հայոց Հայրապետին և՛ նորա 80-ամյա հորեյանական հանդեսի տոնակատարության առթիվ՝ նվիրաբերել է ոսկե թանկարժեք ժամացույց մակագրությամբ, որ անշուշտ կլինի մեայուն հիշատակ գալիք սերունդների համար և հուշարար՝ հեղինակայ ժողովրդի ազգային-կրոնական ջերմ զգացմունքների և ապրումների:

Նվիրատուներն են՝ 1. Հայրապետական ոսկե ժամացույցը, հայրապետական և եպիսկոպոսական արծաթ-նսկեգոծ գավազաններն ու մեացյալ զգեստները նվիրել է Կալկաթայի բարեպաշտ և հայրենասեր հայությունը: 2. Սուրբ

Պատարագի հայրապետական լիակատար զգեստը ընծայաբերել են պ. Հակոբջան և տ. Ֆրիտա Խաչատրյան բարեպաշտ ամուսինները: 3. Սուրբ Պատարագի եպիսկոպոսական լիակատար զգեստ՝ գերաշնորհ տեր Վահան արքեպիսկոպոսի անունով նվիրաբերել է պ. Պետրոս Ալեքսանյանը: 4. Սուրբ Պատարագի եպիսկոպոսական մի ձեռք զգեստ նվիրաբերել է պ. Ղազար Մկրտչյանը: 5. Սուրբ Պատարագի եպիսկոպոսական մի ձեռք լիակատար զգեստ նվիրաբերել է շնորհաշուք տիկին Մարիամ Բաղդասարյանը: 6. Սուրբ Պատարագի եպիսկոպոսական լիակատար մի ձեռք զգեստ նվիրաբերել է շնորհաշուք տիկին Արգարյանը ի հիշատակ իր ամուսնու՝ հանգուցյալ Հայկ Արգարյանի:

Վերոհիշյալ փաստական տվյալները Մեզ վերա բարոյական պարտ են դնում օրհնելու հայուրյան սիրելի դարձած հեղինակայ պատմական և պատվական ժողովուրդը: Օրհնյալ լինի մշտապես Տիրոջ հովանին որոնող մեր պատվական հեղինակայ ժողովուրդը, մաղթենք կենսատու Փրկչին, որ իր հովանու ներքա անեն նորան, վառ պահեն նորա եկեղեցասեր և ազգասեր ոգին և ազատ պահեն ամեն փորձանքներին:

Օրհնյալ լինեն վերևում հիշատակված հայրապետական և եպիսկոպոսական Սուրբ Պատարագի զգեստները ընծայաբերող հիեզ նվիրատուները. մաղթենք մաղթասեր Փրկչին, որ իր հովանի Աջը տարածե հիշյալ նվիրատուների վերա, պահպանեն նոցա ընտանիք բարօր վիճակի մեջ, պարգևեն նոցա անշատություն և գործերին հաջողություն:

Օրհնյալ լինի Կալկարայի Սուրբ Նազարեթ հայոց եկեղեցու շեմնոսանդ և գործունյա հոգաբարձությունը. մաղթենք, որ Բարձրյալը պահպանեն նոցա կյանքը, գորացեն նոցա եռանդը և անմար պահեն նոցա սերը դեպի Մայր Աթոռն ու Հայրենիքը: Օրհնյալ լինի նաև Մեր հայրապետական պատվիրակ՝ գերաշնորհ տեր Վահան արքեպիսկոպոսը. աղոթեցեք Ամենակալին, որ անողություն և արեւատություն շնորհեն նորան, որպեսզի ի վիճակի լինի նաև հետ այսուրիկ այցելելու Մեր սիրելի վարաբանի ժողովրդին, մխիթարելու և նորա հոգևոր-կրթական կարիքները հոգալու, ողջամբ վերադառնալու և հանդես պարտ էլ միաձենի պարգեբես հանդիսանալու:

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ  
ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԳԵ. . . 23

Տուա կոնդակս ի 10-ն յունիսի

1952 Փրկչական ամի

և ի տումարիս Հայոց ՌՆԱ,

յուրերորդ ամի Հայրապետության Մերոյ,

ի վանս Մրոյ էջմիածնի:

